ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

01.07.2021թ. կայացած շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստի վերաբերյալ

ք. Երևան **09.07.2021թ.**

2021 թվականի հուլիսի 1-ին տեղի ունեցավ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում որոշվեց նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ որոշում ընդունել:

Քվեարկությանը մասնակցում էին

Կառավարման խորհրդի նախագահ՝

Վ.Քերոբյան

Կառավարաման խորհրդի անդամներ՝

Ա.Հովհաննիսյան	-Արդարադատության նախարարի տեղակալ
Լ.Նանուշյան	- Առողջապահության նախարարի տեղակալ
Վ.Սիմոնյան	- Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Կ.Միրզաբեկյան	- ՀԱՊՀ դասախոս, դոցենտ
Ա.Հայրապետյան	- Ֆինանսների նախարարի տեղակալ
Կ.Սահակյան	-Երևանի պետական համալսարան, դասախոս, տնտեսագիտություն և կառավարում ֆակուլտետ, ֆինանսահաշվային ամբիոն
Մ.Հակոբյան	-Սպառողների ազգային ասոցիացիա
Ս. Պետրոսյան	-խորհրդի քարտուղար

Հրավիրված էին՝

Ա. Կոտոյան- ՇՎՏՄ ղեկավար,

Ա. Մկրտչյան- ՇՎՏՄ ղեկավարի տեղակալ,

Ա. Դանիելյան-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի

Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Կառավարման խորհրդի նախագահ պարոն Վ. Քերոբյանի բացակայության պայմաններում նիստը վարեց խորհրդի անդամ պարոն Ա. Ասոյանը՝ հիմք ընդունելով Խորհրդի նախագահի ս.թ. հուլիսի 1-ի համապատասխան գրությունը:

Քվեարկության օրակարգային հարցեր

1.Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

2. Տեղական արտադրողների պաշտպանության համար մեխանիզմների կիրառման մոտեցումների քննարկում:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

3. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որոշումների անվավեր ճանաչելու պահանջով վարչական դատարան ներկայացված հայցադիմումների և դատարանի վճիռների վերլուծություն:

Զեկուցող՝ Ա. Սարգսյան

4.Հաստատել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատումը:

Զեկուցող՝ Ա. Սարգսյան

5. Քայքայվող պլաստիկի վերաբերյալ:

5. Քայքայվող պլաստիկի վերաբերյալ:

Զեկուցող՝ Ա.Կոտոյան

6. Համաձայնեցնել հաջորդ կայանալիք կառավարման խորհրդի հերթական նիստի ամսաթիվը:

Զեկուցող՝ Ա. Կոտոյան

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստին ներկա էին խորհրդի անդամների 2/3-ից ավելին՝ նիստը համարվեց կայացած և խորհրդի քվեարկությանը դրվեց Օրակարգը:

Նյութերը ներկայացվեցին խորհրդի անդամներին քվեարկության:

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1. Ա.Ասոյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
2. Լ.Նանուշյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
3. Ա.Հովհաննիսյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
4. Վ.Սիմոնյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
5. Ա.Հայրապետյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
6. Կ.Սահակյանը ՝ հարցին քվեարկեց կողմ.
7. Կ.Միրզաբեկյանը՝ հարցին քվեարկեց կողմ,
8. Մ.Հակոբյանը՝ հարցին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքում 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատվեց Օրակարգը

1. Ա. Ասոյանը հետաքրքրվեց նախորդ նիստերին տրված հանձնարարականների կատարման ընթացքով և մատնանշեց նախորդ նիստերին քննարկված 3 հարցերի առկայությունը: Դրանցից առաջինը այն էր, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, Գրասենյակի և տեսչական մարմնի հետ համատեղ կմշակի թուրքական ծագման արտադրանքների շուկայահանման արգելքի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որը սակայն դեռևս չի ներկայացվել Գրասենյակ և տեսչական մարմին:

Ի պատասխան Պարոն Սիմոնյանը նշեց, որ թուրքական ծագման ապրանքների վերահսկողության համակարգը արդեն իսկ առկա է, քանի որ սահմանային վերահսկողությունը իրականացվում է ՊԵԿ-ի մաքսային վերահսկողության կողմից, մասնավորապես կանտրաֆակտի առկայությունը

ստուգվում է այն դեպքում, երբ մտավոր սեփականության փաստը ամրագրող հատուկ գրանցամատյանում գրանցված սեփականատերերի ցանկից դուրս այլ անձիք նույնանման ապրանքների ներմուծումներ են կատարում, և այդ փաստը ահազանգվում է, իսկ թուրքական ծագման ապրանքների նկատմամբ ներքին շուկայում վերահսկողությունը իրականացնում է Ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի վարչության առանձին բաժինը, որը զբաղվում է մտավոր սեփականության դեմ հանցագործություններով: Իսկ տեսչական մարմնին նման լիազորություն տալու դեպքում, անհրաժեշտ է նոր գործիքակազմ և օրենսդրական փոփոխություններ: Որպես օրինակ բերվեց ԵՄ-ի հետ կնքված CEPA-ի շրջանակներում շամպայնի վերահսկողության անհրաժեշտությունը և մի շարք այլ ապրանքների, որի համար իրենք դիմել են վարչապետին՝ ՊԵԿ-ին և Ոստիկանությանը համապատասխան հանձնարարականներ տալու համար:

Ա. Ասոյանը պատասխանեց, որ այս դեպքում անհրաժեշտ է սպասել վարչապետի հանձնարարականների կատարման արդյունքներին: Վերջինս հավելեց նաև, որ օրենսդրական նախաձեռնությունների փաթեթը կազմելու համար անհրաժեշտ է հանդիպում կազմակերպել և՛ տեսչական մարմնի, և՛ նախարարության համապատասխան ոլորտի մասնագետների միջև և համատեղ աշխատանքային կարգով քննարկել խնդրի լուծման տարբերակները: Ավելին, եթե ՊԵԿ-ի և Ոստիկանության գործառույթների շրջանակներում խնդիրը կարգավորվում է, ապա հարցը կարելի է համարել փակված, հատկապես, որ նման ծավալների արդյունքում տեսչական մարմինը հավելյալ ծանրաբեռնվածություն է ձեռք բերելու:

Պարոն Կոտոլյանը նշեց, որ տեսչական մարմնին նոր գործառույթներ վերապահելը ողջունելի է իր կողմից, սակայն անհրաժեշտ է դիտարկել համապատասխան ռեսուրսների առկայության հարցը ևս:

Պարոն Սիմոնյանը շարունակելով իր խոսքը և անդրադառնալով թուրքական ծագման ապրանքների վերահսկողությանը՝ նշեց, որ սահմանին վերահսկողությունը ներմուծման ժամանակ իրականացնում է բացառապես ՊԵԿ-ը, որը պատշաճ գործընթացների իրականացման արդյունքում բացառելու է թեկուզ այլ երկրներից՝ ԵՄ-ից կամ Ռուսաստանից թուրքական ծագման ապրանքների ներմուծումը: Ինչ վերաբերում է վաճառքի արգելքին, ապա դա իրականացնում է Ոստիկանությունը, սակայն այս պահի դրությամբ դա նպատակահարմար չէ, քանի որ կան տնտեսավարողներ, որոնք մինչև դեկտեմբերի 31-ը դեռ սպառման ապրանքներ ունեն: Այնուհանդերձ, բոլոր սահմանափակումները 6 ամսով են, քանի որ մենք սահմանափակված ենք ԵԱՏՄ կանոնակարգերով:

Ա.Ասոյանը հարց ուղղեց տեսչական մարմնին բենզինի շուկայում առկա խնդիրների կարգավորման մասին, որին ի պատասխան Ա. Կոտոյանը նշեց, որ մի շարք կարգավորումներ արդեն իսկ գործում են, իսկ որոշները մշակման փուլում են գտնվում:

Տիկին Մ. Հակոբյանը հետաքրքրվեց տեսչական մարմնի կառուցվածքի վերաբերյալ նախորդ նիստի օրակարգում ընգրկված հարցից՝ նշելով, որ մի շարք հարցերի ֆինանասական հիմնավորվածությունը անհասկանալի էր, և առկա էին անհամապատասխանություններ:

Պարոն Ա. Կոտոյանը նշեց, որ այդ հարցն արդեն իսկ խորհրդի կողմից հաստատվել է, սակայն հիմնավորման հետ կապված խնդիրները պատրաստ է քննարկել այդ խնդիրները ներկայացնելու պարագայում:

Պարոն Ասոյանը նշեց, որ խորհրդի անդամը սահմանափակված չէ բացառապես քվեարկելու լիազորությամբ և 1000-Ն որոշման համաձայն՝ հստակ կարգավորված է, որ խորհրդի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Հետևաբար, այսուհետ յուրաքանչյուր խորհրդի անդամ կարող է իր անհատական կարծիքները կցել արձանագրությանը: Թեև նշված հարցը նախորդ նիստին արդեն իսկ քննարկվել է խորհրդի կողմից և ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Հաշվի առնելով քննարկումների բովանդակությունը և ծավալը՝ պարոն Ասոյանը նշեց քարտուղարության կողմից առավել ծավալուն և մանրակրկիտ արձանագրություն կազմելու անհրաժեշտության մասին:

Ա. Ասոյանը առաջարկեց այսուհետ նախորդ նիստերին տրված հանձնարարականների կատարման հսկողությունը վերապահել տեսչական մարմնի որակի ստորաբաժանմանը, իսկ որակի ստորաբաժանմանը տրված հանձնարարականների կատարման հսկողությունը վերապահել քարտուղարությանը: Առաջարկությունը ընդունվեց խորհրդի բոլոր անդամների կողմից:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց նախորդ նիստերի ընթացքում տրված հանձնարարականների կատարման հսկողությունը վերապահել որակի ստորաբաժանման ղեկավարին, իսկ որակի ստորաբաժանմանը տրված հանձնարարականների կատարման հսկողությունը վերապահել քարտուղարությանը:

2. Ա. Ասոյանը առաջարկեց օրակարգի 2-րդ հարցը քննարկել կառավարման խորհրդի հաջորդ նիստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցն

օրակարգում ընդգրկել է Վ. Քերոբյանի առաջարկությամբ, և նպատակահարմար է այն քննարկել պարոն Քերոբյանի մասնակցությամբ կայանալիք նիստում:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը ներառվեց տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստի օրակարգում:

3. Ա. Սարգսյանը ներկայացրեց ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որոշումների անվավեր ճանաչելու պահանջով վարչական դատարան ներկայացված հայցադիմումների և դատարանի վճիռների վերլուծությունը:

Մասնավորապես, Ա. Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է բացառել վարչական վարույթներում վրիպակները, ջնջումները և ակտում բովանդակային մասը շարադրել առավել մանրամասն՝ բացառելով ընդհանրական բովանդակությունները, ինչպես նաև հավելեց, որ 2017թ. համեմատ 2020թ. դատարան ներկայացրած միջնորդությունները տնտեսվարող սուբյեկտների կողմից 6 անգամ ավելացել են:

Արթուր Ասոյանը առաջարկեց այսուհետ նմանատիպ հարցերը ներկայացնել համակարգչային ցուցադրման տեսքով: Արմեն Հայրապետյանը առաջարկեց դատարանում ի վնաս տեսչական մարմնի կայացված վճիռների և որոշումների վերաբերյալ իրականացնել ծառայողական քննություն՝ պարզելու դատարանում ի վնաս տեսչական մարմնի կայացրած որոշումների հանգամանքները: Ա. Ասոյանը առաջարկեց իրականացնել ծառայողական քննություն ներկայացված բոլոր 15 դեպքերի վերաբերյալ, որոնք անցել են դատաքննության փուլերը կամ գտնվում են դատաքննության ընթացքում, իսկ ծառայողական քննության կատարումը կազմակերպել այնպես, որ տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման աշխատակիցները ուսումնասիրեն տեսչական մարմնի իրավաբանական վարչությանը առնչվող հարցերը, իսկ այն հարցերը, որոնք վերաբերում են այլ ստորաբաժանումների՝ ուսումնասիրեն իրավաբանական վարչության աշխատակիցները:

Արմեն Կոտոլյանը հարց ուղղեց կառավարման խորհրդի անդամ Արմեն Հովհաննիսյանին այն մասին, թե տեսչական մարմնի կողմից կիրառված տուգանքի իբրև անհամաչափության շրջանակում դատարան բողոքարկված և վարչական ակտն անվավեր ճանչված գործերով տեսչական մարմինը իրավասություն ունի կայացնելու առավել ցածր վարչական տուգանք նշանակելու մասին նոր որոշում, երբ նման դեպքերում դատարանը սահմանել է, որ տուգանքը անհամաչափ է իրավախախտմանը: Ա. Հովհաննիսյանը հայտնեց, որ տեսչական մարմինը

իրավասություն ունի կայացնելու նոր տուգանք նշանակելու մասին որոշում՝ առավել ցածր վարչական տուգանքի չափի կիրառմամբ:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հանձնարարել տեսչական մարմնին ներկայացված թվով 15 գործերի վերաբերյալ իրականացնել ծառայողական քննություն, իսկ ծառայողական քննության անցկացումը կազմակերպել այնպես, որ տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման աշխատակիցները ուսումնասիրեն տեսչական մարմնի իրավաբանական վարչությանը առնչվող հարցերը, իսկ այն հարցերը, որոնք վերաբերում են այլ ստորաբաժանումների՝ ուսումնասիրեն իրավաբանական վարչության աշխատակիցները:

4. Սարգսյանը ներկայացրեց << շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատումը:

Պարոն Կ. Սահակյանը հետաքրքրվեց, թե նշված դինամիկան, ըստ որի տեսչական մարմինը 2020 թվականի 12 ստուգում է ունեցել՝ խախտումները՝ 60%, իսկ ներկայումս՝ 50%, բայց նպատակին հասնելու մակարդակը փոխվել է, արդյո՞ք նշանակում է, որ տեսչական մարմինը ավելի լավ է աշխատում, թե վատ, որին ի պատասխան պարոն Սարգսյանը նշեց, որ նման գնահատական տալու իրավասություն չունի, և գնահատականը տալիս է խորհուրդը, իսկ ինքը ներկայացրել է կատարողականի գնահատումը՝ հիմք ընդունելով հաստատված մեթոդաբանությունը:

Պարոն Ասոյանը պարզաբանեց, որ այստեղ սկզբունքի հարցն է, այսինքն գնահատականի է արժանի ոչ թե ավելի շատ խախտումների հայտնաբերումը, ինչը հակադարձ հարաբերական է տեսչական մարմնի լավ աշխատանքին, այլ ինչքան շատ խախտումներ են հայտնաբերվում, ուրեմն այդ ոլորտի վիճակը շատ ավելի վատ է:

Արթուր Ասոյանը առաջարկեց հաստատել << շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատումը:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց հաստատել << շուկայի վերահսկողության տեսչական մարմին 2021 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատումը:

5. Արթուր Ասոյանը առաջարկեց օրակարգի 5-րդ հարցը ևս քննարկել կառավարման խորհրդի հաջորդ նիստին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցն առաջարկել է օրակարգում ընդգրկել Վ.Քերոբյանի առաջարկությամբ, և

նպատակահարմար է այն քննարկել պարոն Քերոբյանի մասնակցությամբ կայանալիք նիստին:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը ներառվեց տեսչկան մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստի օրակարգում:

6. Արթուր Ասոյանը առաջարկեց հաջորդ նիստը անցկացնել 2021 թվականի հուլիսի 15-ին ժամը 16:00-ին:

Խորհրդի անդամների 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ որոշվեց տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստը անցկացնել 2021 թվականի հուլիսի 15-ին ժամը 16:00-ին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ **Վ.Քերոբյան**
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ **Ս.Պետրոսյան**
ստորագրություն